

ԲԳԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈԽ ԼՏ-ՊՐՈՊ ԲԱԺԻՆ

355.3

Խ-11

# ԾՐԱԳԻԾ

ԲԳԿԲ ԹԵԿՆԱԾՈՒԾԿԱՆ ԴՊՐԱՑԻ

1982-83 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

ԳԵՂՋՐԱՑ-ՌԱԶՄԱՐԱՑՎԱՔՆ

ՀԱՐԳՎ. 0.6

1988

30 SEP 2013

ԲԳԿԲ ՔԱՂՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏ-ՄՐՈՊ ԲԱԺԻՆ

355.3

Խ-11

այ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԲԳԿԲ ԹԵԿՆԱԾՈՒԵԿԵՆ ԴՊՐՈՑԻ

1008  
34601

1932-33 ՈՒՍՈՒՄՆԱԿՄԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ



ԱՆԴՐԻԱՎԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1932

1 - Ի Ն Ց Ե Մ Ա

Հ Յ Դ Հ Ա Մ Յ Ա Կ Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Յ Ե Վ Տ Ս Տ Ե Ս Ա Կ Ա Ն  
Խ Ն Գ Ի Բ Ի Բ Ն Ե Բ Ը

(Յերկու պարագմունք)

## 1. Կ Ե Ր Ա Ծ Ո Ւ Բ Ր Յ Ո Ւ Ա

Սոցիալստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը, յերկրի ներսում «ով-ում» հարցի վճռական լուծումը հոգուտ սացիալիզմի և ԽՍՀՄ վերջնական ամրացումը սոցիալստական ճանապարհին, փորձես սոցիալստական շխաբարության կարիքություն արդյունքն առաջին հագամյակում: ԽՍՀՄ աղբարային յերկրից բնդուստրիալ յերկրի դառնալը և սեփական տեխնիկական բազա ստեղծելը՝ յերկրորդ հնագամյակում ամրող ժողովրդական տնտեսության վերակառուցումն ավարտելու համար: Փորձազրկության լրիվ վերացումը: ԽՍՀՄ աշխարհում ամենախոչըր զյուղատնտեսության յերկրի վերածելը՝ կուլտստիվացման, խորհանուսությունների ծավալման ու մեքենայական տեխնիկայի լայն կիրառման հիման վրա: Բանվոր դասակարգի ու կոշտնախական գյուղացիության զրության անընդհատ բարեւալումը:

Համաշխարհային անտեսական ճնշամամի հետազա խորացումը և կապիալավելմի բոլոր հակասությունների չփենալված սրումը: Արտադրության կատաստրոֆիկ անկումը, գործադրկության չունալած աճումն ու աշխատավորների աղքատացումը կապիտալի յերկրներում: «Կապիտալիզմի ստարելիվացիան վերջացավ: Տեղի յէ ունենում անցում դեպի պատերազմների ու հեղափոխությունների նոր շրջանը, վորն արագացվում է ճամփանական ու փրանսական իմպերիալիզմի ռազմատեսչ քաղաքականությամբ: Կապիտալիզմը մո-

տեցել է կատաստրոֆների, դառակարդային սուր ընդհարումների, պատերազմի միջոցով աշխարհի նոր վերաբաժանման փորձերի շրջանին»:

Յերկու աշխարհի—յերկու սիստեմ: Կապիտալի յերկրներում տնտեսական խորագույն ճնշամամր կապիտալիստական սիստեմի անձարակության պայման աղացույցն ե: Բուրժուազիայի ձգտումը՝ ճնշամամից դուրս դարձու աշխատավորների եւ ավելի մեծ կողովուման և նոր խմբերիալիստական պատերազմների ու ամենից առաջ՝ ԽՍՀՄ դեմ պատերազմի միջոցով: Միջաղդային պրոյետարիատի պայքարը կոմկուսակցությունների ղեկավարությում՝ ճնշամամի հեղափոխական յերկի համար: Մի շարք կապիտալիստական յերկրներում հեղափոխական ճնշամամի նախադրյալների առումը:

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ մեջ պայմանական սիստեմի առավելությունների համար կամաց աղբարական տնտեսության համար: ԽՍՀՄ վերջնահանապես հաստատվել է սոցիալիստական ճանապարհին, ԽՍՀՄ համաշխարհային պլրութարիատի հարվածային բրիգադն ե:

17-րդ կուսկոնֆերանսի վորոշումներն հանդիսանում են յերկրորդ հնդամյակում անդասակարության կառուցման ծրագիրը: 17-րդ կուսկոնֆերանսի վորոշումների համաշխարհային-պատմական նշանակությունը:

Խաղաղության մեր քաղաքականությունն ու կարմիր բանակի եռորդի ամրացման խնդիրները: «Ուրիշի հողից վոչ մի թիգ մենք չենք ուղղում: Բայց և մեր հողը, մոչ մի վերջոկ մեր հողից մենք չենք տա ուրիշին» (Ի. Ստալին):

Պրոյետարիատի դիկտատորայի հետազա ամրացման և պայքարի ծավալման անհրաժեշտությունն՝ բնդիրները աջ թեքման, փորպես տիրայի ետապում գյուղավոր վտանգի և ընդդեմ հաշտվողականության:

2. Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրները

«Կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարրերություն ու շահագործում առաջնորդ պատճառների լիակատար վոչնչացումը և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումն եկոնոմիկայում և մարդկանց զիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչությանը սոցիալիստական անդասակարդ հասարակության դիտակից և ակտիվ կառուցողներ դարձնելոր»—ահա յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը:

Մարքս-Ենդելս-Լինգնը կոմունիստական հասարակության յերկու Փաղանների մասին: Սոցիալիզմ ու կոմունիզմ: Սոցիալիզմը վորպես կոմունիզմի առաջին Փաղա: Դասակարգերի վոչնչացման ուղիները յերկրորդ հնգամյակում: «Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը փոխելով ու դարձնելով այն համայնական և մտցնելով հասարակակիանարտադրական պրոցեսի ողլանաչափ կազմակերպում՝ ապահովելու համար հասարակության բոլոր անդամների բարեկեցությունն ու բարձակողմանի զարգացումը, պրոետարիատի սոցիալական հեղափոխությունը կիոչնչացնի՝ հասարակության բաժանումն բառ դասակարգերի և արդարիստի խոկապատի ամրող ճնշված մարդկությունը, քանի վոր վերջ կղնի՝ հասարակության մի մասի կողմից մյուս մասի ամեն տեսակ շահագործմանը» (Կուսակցության ծրագիրը):

Սոցիալիստական ինդուստրացումն ու գյուղատնտեսության կոլեկտիվացումը դասակարգերի վոչնչացման ուղին են: Ինդուստրացման ու կոլեկտիվացման հաջողությունները: Սոցիալիստական սեկտորի բացարձակ դերակցությունը: Կապիտալիզմի արմատների վերջնական հատումը, գյուղում սոցիալիստական շինարարության ամուր հենարան ստեղծելը,

ՊԵՀՄ ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտման համար սեփական բազա ստեղծելու: Մի յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին հակահեղափոխական տրոցկիզմի թեորիայի մասնկությունը:

Դասակարգային պայքարի սրման անխուսափելիությունն առանձին մոմենտներին և մանավանդ առանձին ռայոններում ու սոցիալիստական շինարարության առանձին բնագավառներում, «բուրժուական աղղեցությունների պահպանման իսկ վորոշ գեղքերում նաև ուժեղացման անխուսափելիությունն աշխատավորների առանձին խավերի ու խմբակների վրա, դեռ յերկարառև ժամանակաշրջանի ընթացքում սլրուետարիատին խորթ դասակարգային աղղեցությունների սողոսկման անխուսափելիությունը բանվորների և մինչև խոկ կուսակցության մեջ» և այդ առթիվ «պրոլետարական դիկտատորայի ամրացման և պայքարի հետաքա ծավալման անհրաժեշտությունը ընդունեմ ուղղութունիզմի, մանավանդ ընդդեմ աջ թեքման, վորպես տվյալ ետակում գլխավոր վտանգի»:

«Կուլակի՝ սոցիալիզմի մեջ ներաճման», պրոլետարիատի դիկտատորայի որոք դասակարգային պայքարի ժարելու, յերկրորդ հնգամյակում «պլանային զարգացման» մասին աջ ուղղութունիստական թեորիայի կուլակային եյությունը:

Պրոլետարիատի առաջապահ դերը սոցիալիզմի համար մղած պայքարում ու բոլոր աշխատավորների սոցիալիստական վերադաստիվակման մեջ: Նոր աշխատանքային կարգապահության դաստիարակումը, վորպես հիմք՝ ամբողջ աշխատավոր բնակչության անդասակարգ սոցիալիստական հասարակության դիտակից միկտիվ կառուցողներ դարձնելու համար: Ընկը. Ստալինի վեց ցուցումները, վորպես աշխատանքի ամենաբարձր արտադրողականության համար մղվող պայքարի ծրագիր:

ԱԵՆԻՆՅԱՆ կուսակցության ղեկավարության դերն ու  
նշանակությունը յերկրորդ հնդամյակի Հիմնական քաղաքա-  
կան խնդրի լուծման համար մզլելիք պայքարում :

3. Պրոլետարական պետության ու կուսակցության պահպա-  
նության ու հետագա ամրացման անհրաժեշտությունը  
յերկրորդ հնգամյակում

Պրոլետարիատի դիմատուրան, վորպես բանվոր դասա-  
կարգի իշխանություն, վորի խնդիրներն են .—1) բուրժուա-  
կան պետական մեջնայի ջարդումն ու տապալված շահադոր-  
ծողների ճնշումը, յերկրի պաշտպանությունը, այլ յերկրնե-  
րի պրոլետարիատի հետ կապեցի ամրացումը, բոլոր յերկրնե-  
րում հեղափոխության դարձացումն ու հաղթանակը. 2) պրո-  
լետարիատի դաշինքի ամրացումն աշխատավոր մասսաների  
հետ, նրանց սոցիալիստական շինարարության դործին ներ-  
դրավումը և այդ մասսաների պետական ղեկավարությունը  
պրոլետարիատի կողմից. 3) սոցիալիզմի շինարարության  
կաղմակերպումը, դասակարգերի վոչչացումը և լրիվ սո-  
ցիալիստական հասարակություն կառուցելը: Պրոլետարական  
դիմատուրայի պետության ամրացումը սոցիալիզմի կառուց-  
ման շրջանում կարևորագույն խնդիրն ե: Միայն կոմունիզմը  
միանդամայն կվերացնի պրոլետարական պետության ան-  
հրաժեշտությունը:

Պրոլետարական պետության ամեն կերպ ամրացումը,  
վորպես նրա վերացման միակ ուղին: «Պետական իշխանու-  
թյան ամենաբարձր դարձացումը՝ պետական իշխանու-  
թյան մահացման համար նախապայմաններ պատրաստելու  
նպատակով—ահա մարդու համականության Փորմուլան» (Ստալին):

Արտաքին ու ներքին այն պայմանները, վորոնք թերա-  
զրում են պրոլետարական պետության հետադա եղ ավելի  
ամրացման անհրաժեշտությունը յերկրորդ հնդամյակում:  
Կարմիր բանակի ամրացման խնդիրը:

ԼԵՆԻՆՆ ու Ստալինը պըոլետարական պետության մա-  
հացման պայմանների մասին: Ընկ. Բուխարինի՝ ոլետության  
մահացման մասին թեորիայի ոպորտունիստական եյությու-  
նը: Ընկ. ԼԵՆԻՆԻ կողմից այդ թեորիայի քննադատությունը:  
Համատարած կոլեկտիվացման ռայոններում խորհուրդների  
վերացման մասին «ձախական» առաջարկների ոպորտունիս-  
տական եյությունը: Պրոլետարական ղեկավարությի ամ-  
րացման ուղիները տվյալ ետապում:

Բայց կեկյան կուսակցության ու կուսակցության առաջ-  
նորդ ընկ. Ստալինի գլխավորած նրա լենինյան կենտրոնի դե-  
րը սոցիալիստական անդասակարգ հասարակության կառուց-  
ման խնդրի լուծման մէջ: Կուսակցության, վորպես սոցիա-  
լիստական շինարարության ու մասսաների սոցիալիստական  
վերադաստիրակաման կազմակերպչի ու ղեկավարի, դերի  
բարձրացումը:

4. Յերկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական խնդիրը

Ժողովրդական ամբողջ տնտեսության տեխնիկական վե-  
րակառուցման ավարտումը, վորպես յերկրորդ հնդամյակի  
Հիմնական տնտեսական խնդիրը:

ԼԵՆԻՆՆ աշխատանքի բարձր արտադրողականության մա-  
սին, վորպես կապիտալիզմի զեմ սոցիալիզմի հաղթանակի  
հիմնական պայմանի: «Աշխատանքի արտադրողականու-  
թյունն այդ վերջնական հաշվով ամենակարևորն ե, ամե-  
նազլիւթյունն ե նոր հասարակակարգի հաղթանակի համար»  
(Լենին):

Ընկ. Ստալինի վեց պայմանների նշանակությունը՝ աշ-  
խատանքի բարձր արտադրողականության հասնելու, յերկ-  
րորդ հնդամյակի պլանը կատարելու համար մզած պայքա-  
րում:

ՏԵԲԻՆԻ աշխատանքը, պայքարը նոր ինտելի-  
գենցիայի կաղըերի և աշխատավորների ամբողջ մասսայի

կուլտուրական մակարդակի համար մզվող պայքարը, վոր-  
ութեա կարևորագույն պայմաններ յերկրորդ հնդամյակի խըն-  
դիբների կատարման համար: Վորակային բարձր ցուցանիշ-  
ների համար, խոսանքի ու պարապուրդների դեմ մղվող  
պայքարի խնդիբները:

Արդյունաբերության ու տրանսպորտի վերակառուցումն ավարտելու ուղիները։ Խորհրդային մեքենաշինարարության առաջատար դերը։ Ելեկտրիֆիկացիայի ու քիմիայի զարգացման նշանակությունը ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտման մեջ։ Ժողովրդական տնտեսության զարգացման բայց և կյանք տեմպերը և տեխնիկական-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին «Հասնելու և նրանցից անցնելու» խնդիրը, վորպես ուղի ԽՍՀՄ տնտեսական անկախությունը վերջնականացնելու ապահովելու համար։

Գյուղատնտեսության վերակառուցման ուղիները։ 1932-33 թ. թ. հիմնականում համատարած կոլեկտիվացման ավարտումը։ Գյուղատնտեսության մեջնայացումը տրակտորի, կոմբայնի, ավտոմոբիլի լայն տարածման և ելեկտրականության հետզհետե արմատացման հիման վրա։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նշանակությունը՝ քաղաքի ու գյուղի միջև ներհակության վերացման համար։ Կոլտնտեսությունների կազմակերպչական-առնեսական ամրացումը, գորպես տվյալ մոմենտի կարեռագույն խնդիր։ Վճռական պայքարի անհրաժեշտությունն ընդդեմ կոլտնտեսությունների արտելային ձևից «ձախական» ցատկելանցնելու։

Բանվորների ու կուտնօտեսական մասսաների բարեկեցության արագ բարձրացումը պարագիտական դասակարգային տարրերի վերացման և ամբողջովին աշխատավորների տնօրինությանը հատկացնող ժողովրդական յեկամտի ընդհանուր աճման հիման վրա։ Յերկրորդ հնդամյակի վերջի

Համեմատությամբ սպառման 2—3 անդամ ավելացման խընդիրը:

կուսակցության կենտրոնի ու կառավարության վորոշումները՝ գյուղհարկի, հացամթերումների, մասմթերումների, կոլտնտեսությունների, կոլտնտեսականների ու մենատնտեսների առևտրի մասին, հեղափոխական որինականության և հասարակական (սոցիալիստական) սեփականության պահպանության մասին ու նրանց նշանակությունը: Կորչըդային, վորի թվում նաև կոլտնտեսական, առևտրի հետազա ծավալումը, վորպես կարեռագույն լծակ՝ ամբողջ ժողովրդական տնտեսության ել ավելի արագ բարձրացման և բանվորների ու կոլտնտեսական մասսաների բարեկեցության աճման համար: Վճռական պայքարի անհրաժեշտությունը՝ ամբացնելու և պահպանելու համար համայնական (սոցիալիստական) սեփականությունը, ընդդեմ սովետական առնող-ծավալական գույքի հափշտակողների անմիջական գործակիցների:

Պայքարի խնդիրներն ընդգեմ խորհրդային առևտությունների բուրքուական-նեալմանական խեղաթյուրումների և ընդդեմ հակարայլչեկիցան «Ճախ» տենդենցիների, վորոնք կամ ենում են «մթերապիոխանակման» անցնել սոցիալստական շինարարության արդեն խոկ տվյալ շրջանում : Դրամի գերը ԽՍՀՄ զարգացման ժամանակակից շրջանում : «Դրամի մահացման» վերաբերյալ «Ճախ» Փրազների ոպորտունիստական բնույթը :

5. Յերկրորդ հնգամյակն ու յերկրի պաշտպանությունը

Յերկրորդ հնգամյակը, փորձես կապիտալիստական յերկրների ու գաղութմների բանվորների և աշխատավոր գյու-

Դացիների հեղափոխականացման հուժկու գործուն: Կապիտալիստական յերիների աշխատավորների մեջ համակրանքի աճումը դեպի ԽՍՀՄ և նրանց պայքարը ԽՍՀՄ պաշտպանության համար:

Նոր իմպերիալիստական պատերազմների և ԽՍՀՄ դեմքնաբերվենցիայի պատրաստությունը: Ամհմանների ջնջումը խաղաղ դրության ու պատերազմի միջև, վորպես տվյալ մոմենտի բնորոշ առանձնահատկություն: «Երազում են պատերազմի մեջ և պատերազմում են տառնց բացահայտուն պատերազմ հայտարարելու» (Մոլոտօվ): ԽՍՀՄ դեմքինված հարձակման անմիջական սպառնալիքը:

ԽՍՀՄ դեմ պատերազմի ստառնալիքն սովորնարիք և ամրող համաշխարհային պրոլետարիատի համար: Կոմիտենինի պայքարը՝ ճշնաժամից հեղափոխական յերի համար: Կարմիր բանակի ամրացման խնդիրը, վորպես ներկա մոմենտում կենտրոնական խնդիրներից մեկը: Յերկրորդ հնգամյակը և ԽՍՀՄ պաշտպանությունը: Ամրող ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը, կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վոչնչացումը, վորպես վճռական պայման ԽՍՀՄ պաշտպանությունը ել ավելի ամրացնելու համար:

---

## Հ Բ Դ Թ Ե Մ Ա

ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆ-ՍՏԱԼԻՆԻ ՌԻՍՈՒԻՆԻՑԻ ՀԻՄՈՒԻՑԻՆԵՐԸ  
ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Յերկու պարապմունք)

1. Կուսակցությունը պրոլետարիատի առաջավոր ջոկատն եւ ու դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը:

Դասակարգն ու կուսակցությունը: Անինն ու Ստալինը կուսակցության մասին, վորպես կուսակցության առաջապա-

հի, վորպես նրա ռասակարգային կազմակերպության բարձրագություն ձևի:

Կուսակցությունը պրոլետարիատի առաջնորդն եւ իշխանության գրավման ու սոցիալիզմի կառուցման համար մղած պայքարում: Հեղափոխական թեորիայի նշանակությունն ու նրա անփակի կատալու պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ:

Տարերայնությունն ու գիտակցությունը բանվորական շարժման մեջ: Տարեբայնության ու ինքնահոսի թեորիան, վորպես յուրաքանչյուր սպարուտնիզմի հիմք: Անինի ու կուսակցության պայքարը մենչելիյան տարերայնության ու պոչականության դեմ նախահեղափոխական շրջանում, վորպես պայքար կուսակցության առաջապահի դերի համար: Կուսակցությունը, վորպես պրոլետարիատի քաղաքական առաջնորդ:

Կուսակցության պայքարն սպարուտնիզմի դեմ յերկու ճակատով՝ Անինյան կուսակցության համար կուսակցության գերի ու դասակարգի հետ նրա ունեցած փոխհարաբերությունների հարցում: Աջ ոպորտունիստական ինքնահոսի թեորիան ու պրակտիկան, վորպես կուսակցության դերի նույնացումը սոցիալիստական շինարարության մեջ:

Հինամական տարբերությունը կոմունիստական կուսակցության, վորպես նոր տիպի կուսակցության, և 2-րդ ինտերնացիոնալի կուսակցությունների միջև: Պրոլետարիատի հեղափոխական կուսակցության վերաբերյալ Մարքս-Ենդելսի ուսմունքի եւ ավելի բարձր աստիճանի վրա բարձրացնելը Անինի ու Ստալինի կողմից: Համկոմկուսը (թ), վորպես նոր տիպի կուսակցություն, պատերազմների ու պրոլետարական հեղափոխության դարաշրջանի կուսակցություն:

2. Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատորայի  
սիստեմում

Կուսակցությունը վորաբես «Հիմնական զեկավար ուժ պրոլետարիատի դիկտատորայի սիստեմում»: «Հաղորդիչ փոկերը» կուսակցությունից գեղի մասսաները (խորհուրդներ, արհմիություններ, կոմսոմոլ, կոոպերացիա): Լենին այդ մասսայական կազմակերպությունների նշանակության մասին՝ պրոլետարիատի դիկտատորայի ամրացման համար: Անկուսակցական կազմակերպություններին կուսակցության ցույց տված զեկավարության ձևերը: Կուսակցության պայքարն ընդգեմ՝ Զինովի կողմից պրոլետարիատի դիկտատուրան կուսակցության «դիկտատորայի» նույնացման: «Կուսակցությունը կենսագործում է պրոլետարիատի դիկտատուրան: Սակայն նա կենսագործում է այդ վոչ թե անմիջորեն, այլ արհմիությունների ողնությամբ, խորհուրդների ու նրանց ճյուղավորումների միջոցով: Առանց այդ «հաղորդիչ փոկերի» անհնար կլիներ փոքր ի շատե կայուն դիկտատուրա» (Ստալին): Հակահեղափոխական տրոցկիստական զրոպարտությունը պրոլետարիատի վրա կուսակցության «դիկտատորայի» մասին: Տրոցկիստների հակահեղափոխական զրաբարտությունը կուսակցության տերմիգորյան վերասերման մասին և նրանց փորձերը կազմակերպելու յերկրորդ կուսակցություն պայքարելու համար պրոլետարիատի դիկտատուրայի գեմ: Տրոցկիզմի վերածվելը հակահեղափոխական բուրժուազիայի ջոկատի ԽՍՀՄ գեմ՝ մղած պայքարում:

Կուսակցության մեջ «ձնչման» ու «բյուրոկրատիզմի» վերաբերյալ տրոցկիստական զրաբարտության կրկնությունն աջ ուղղարունիստների կողմից:

Մեր կուսակցության պայքարը յերկու ճակատով, վորապես վճռական սկանդալու և ամրացնելու համար կուսակցության լենինյան միասնությունը և բարձրացնելու

համար նրա դասակարգային մարտունակությունը: Ֆրակցիոնականությունը, վորպես «միասնական կամքի ըլատում», դիկտատուրայի թուլացում ու քայլայում»: 10-րդ կուսամագումարի վորոշումները կուսակցության միասնության մասին: Լենինի ողահանձը՝ լիովին վոչնչացնելու Փրակցիսնականությունը և անմիջապես ցրելու համար առանց բացառության բոլոր Փրակցիաները՝ անմիջապես և անպայման կուսակցությունից հեռացնելու սպառնալիքի տակ: Կուսակցության զեկավար գերի ամրացման խնդիրները ժամանակակից ետապում:

3. Կուսակցության ստրատեգիան ու տակտիկան, վորպես գիտություն պրոլետարիատի դասակարգային պայքարի գեկավարության մասին.

Պարագայի Մարքս-Լենինյան անալիզը, պատմական ավյալ ետապի դասակարգային բոլոր շափերի ու հակասությունների, առանձնահատկությունների ու յուրահատկության հաշվառումը—ստրատեգիական պլանների ու տակտիկական զեկավարության հիմքն են:

Մեր կուսակցության յերեք ստրատեգիական պլանը հեղափոխության զանազան ետապներում: Ստրատեգիական պլանների փոփոխումը նայած հեղափոխության ետապների: «Առաջին ետապ՝ 1903 թվից—1917 թվի վերաբարը՝ Նորատակներ՝ տապալել ցարիզմը, լիովին վերացնել միջնադարի մնացորդները»:

«Յերկրորդ ետապ՝ 1917 թվի մարտ—1917 թվի հոկտեմբերը: Նորատակներ՝ տապալել իմպերիալիզմը Ռուսաստանում և գուրս դալ իմպերիալիստական պատերազմից»:

«Յերրորդ ետապը՝ սկսվել է Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Նորատակներ՝ ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան մի յերկրում, ողտագործելով այդ յերկրը վորպես

ՀԵՆԱԿԵՄ ԲՈՂՈՐ յԵՐԿՐՆԵՐՈՒՄ իմպերիալիզմը տասկալելու համար» (Ստալին) :

Տակտիկայի ու տակտիկական լողունզների փոփոխումը՝ նայած հեղափոխության մակընթացությունների ու տեղատվությունների, մի ստրատեգիական պլանի ներսում : «1903—1905 թ.-թ. շրջանում կուսակցության տակտիկան յեղել և հարձակողական, քանի վոր հեղափոխության մակընթացությունն եր... 1907—1912 թ.-թ. շրջանում կուսակցությունն ստիպված եր անցնելու նահանջի տակտիկային, քանի վոր այն ժամանակ մեղանում տեղի յեր ունենում հեղափոխական շարժման անկում, հեղափոխության տեղատվություն» (Ստալին) :

ԼԵՆԻՆ-ՍՏԱԼԻՆի ուսմունքը յուրաքանչյուր տվյալ մումնառում զլիսավոր ու հիմնական այն խնդրի ընտրության մասին, վորի լուծումը հանդիսանում և մնացած բոլոր խրնդիրների լուծման բանալին : «Յուրաքանչյուր տվյալ մումնառում պրոցեսների շղթայում այն հատուկ ողակի գտնելը, վորից կառչելով կաբելի յեպահել ամբողջ շղթան և նախապատրաստել պայմաններ ստրատեգիական հաջողության հասնելու համար» (Ստալին) :

Կուսակցության ու կոմիտերնի պայքարը յերկու ճակատով, վորպես նախապայման բայց կիշյան ստրատեգիայի ու տակտիկայի հաղթանակի համար :

#### 4. Բայլշմիզմի կազմակերպչական սկզբունքները

Կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի ամենաառաջավոր, կաղմակերպված ջոկատն ու նրա մարտական չուարը, վորն անհրաժեշտ և պրոլետարիատին՝ դրավելու համար իշխանությունը և սոցիալիզմ կառուցելու համար : ԼԵՆԻՆիմի ծրագրային, տակտիկական ու կազմակերպչական սկզբունքների միասնությունը : Կուսակցության լոգեական

ու կաղմակերպչական միասնությունը, վորպես հիմք նրա միաձուլության ու դասակարգային մարտունակության : Լենինին ու Ստալինը կուսակցության մեջ յերկաթե կարգապահության անհրաժեշտության և այդ կարգապահության մեջ մասին : Ամենախիստ կարգապահության անհրաժեշտությունը կուսակցության մեջ պրոլետարիատուրայի շրջանում : Միասնության ու կարգապահության հատուկ նշանակությունը բանակային կուսակցմակերպության մեջ ու նրա համախմբումը կենտրոնի լենինյան ղեկավարության շուրջը : Ֆրակցիոնականության ու խմբակայնության հատուկ վտանգը ԲԳԿԲ կուսակցմակերպություններում :

Կենտրոնացման (ցենտրալիզմի) ու դեմոկրատիայի սկզբունքի միասնությունը բարձեկիլյան կուսակցության կաղմակերպչական շինարարության մեջ : Լենինի ու Ստալինի պայքարը բայց կիդմի կաղմակերպչական սկզբունքների անսասնության համար բնդդեմ մենակիդմի ու հակածեղափոխական տրոցկիզմի և շամկոմկուսի (թ) մեջ ուղղորդունիստական թեքունների : Կուսակցության կառուցման արտօղական սկզբունքը, վորպես պայքարի վճռական պարմաներից մեկը՝ պրոլետարիատի դիկտատուրայի ու սոցիալիզմի կառուցման համար, քանի վոր արտադրական սկզբունքն ապահովում է .—ա) կուսակցության ամենասերտ կապն անկուսակցական պրոլետարական ամենալայն խավերի հետ. բ) մասսաների մորիլիզացիան պայքարելու կուսակցության գլխավոր գծի կենսագործման համար. գ) սոցիալիստական շինարարության նկատմամբ ուղերատիվ կոնկրետ ղեկավարությունը : Կուսակցության բջիջը, վորպես կուսակցական կաղմակերպության հիմք :

Կուսակցության կանոնագրքի բովանդակության հիմնական մոմենտները : Ով և համարվում կուսակցության անդամ և կուսակցության անդամ ընդունելու կարգը : Յերաշխավո-

բոթյունների նշանակությունը, յերաշխավորողների պոտասիանատվությունը յերաշխավորվողների նկատմամբ: Կուսակցությունից հեռացնելու կարգը: Թեկնածվական սուստի նշանակությունը: Թեկնածվական սուստի ժամկետներն ընդունվողների զանազան կատեգորիաների համար: Թեկնածուների պարտականությունները: Կուսակցության կաղմակերպությունների կառուցվածքը (բջիջից մինչև կուսակցության համադումարը): Կուսարջիջի կաղմակերպումը, դերն ու խընդիրները: Վերահսկիչ (կոնտրոլ) հանձնաժողովները, նրանց նշանակությունն ու խնդիրները: Փոխարարերությունները կուսկումների ու վերահսկիչ հանձնաժողովների միջև: Գուսակցության տուժերի չափերն ու նրանց յենթարկման և կիրառման կարգը: Կուսակցական կաղմակերպությունների դրամական միջոցների մասին: Անդամավճարներ տալու պարականությունը: Համկոմկուսի (բ) Փրակցիաներն արտադրական կաղմակերպություններում: Ֆրակցիաներ կաղմակերպելու ու նրանց գեհավարելու կարգը: Նրանց խնդիրները: Ֆրակցիայի վորոշումների պարտադիր լինելը Փրակցիայի բոլոր անդամների համար՝ կիրառելու համար այդ վորոշումներն արտակուսակցական կաղմակերպություններում:

Ներկուսակցական ղեկավարատիան, վորպես մեթոդ կուսակցական մասսաների ակտիվության բարձրացման ու կուսաշխատանքների կարեռագույն հարցերի քննարկմանը նրանց ներդրավելու, նոր կաղըրելի դաստիարակման ու նրանց ղեկավար աշխատանքի առաջ քաշելու, սոցիալիստական շինարարության մեջ կուսակցության ղեկավար դերի բարձրացման համար:

Ինքնաքննադատությունը կուսակցության մեջ, վորպես մեթոդ մորիլիզացիայի յենթարկելու կուսակցական մասսաներին՝ պայքարելու կուսակցության դիմուլոր դժի համար, կուսակցության լինինյան միասնության հետադա ամրացման համար, ընդղեմ աջ ու «ձախ» ուղղությունների:

դատությունը կարմիր բանակում, վորպես մեթոդ ԲԳԿԲ մարտունակության բարձրացման համար:

Կուսաշխատանքի վերակառուցումը համաձայն սոցիալիստական շինարարության նոր խնդիրների: Վերակառուցման ուղիները: Ընկ. կադանովիչի ցուցումները:

Կուսակցական ապարատի ղերը, վորպես կուսակցության կարեռագույն ղենքի: Կուսապարատի նշանակությունը՝ պրոլետարիատի կողմից իշխանության նվաճման համար մղած պայքարի շրջանում, ինչպես նաև ծավալուն սոցիալիստական շինարարության ու դասակարգերի վերացման շրջանում: Կուսապարատի ղերը կուսակցության մեջ լինինյան միասնության ու կարգապահության համար մղած պայքարում: Տրոցկու և տրոցկիստական-ղենովինյան ուղղուցիչի հականեղափոխական գրաբարությունը կուսապարատի ղեմ:

ՀԵՂ

Կուսակցության յերիտասարդ սերունդը նրա ղենինյան հինգադրերին հակադրելու Տրոցկու փորձի հականեղափոխության բնույթը: Հին բայլյանիկյան կաղըրերի ղերը կուսակցության կաղմակերպման մեջ ու ուղղությունների ղեմ նրա մղած պայքարում:

Լինինն ու Ստալինը կուսակցության ու Կոմինտերնի առաջնորդները:

Կինտկոմը, վորպես կուսակցության քաղաքական, թեորետիկ ու կաղմակերպչական շտաբը:

### Յ - Ր Դ թ Ե Մ Ա

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՅԵՐԸ ԲԳԿԲ-ՈՒՄ

(Յերկու պարապմունք)

1. Համկոմիուսը (բ) Կարմիր բանակի առաջնորդն ու կաղմակերպիչները:



Ե : Բուրժուական բանակը բուրժուաղիայի տիրապետության գործիքն ե , աշխատավորներին ճնշելու ու բռնանալու ապահարատի կարևորագույն բաղադրիչ մասն ե : Կարմիր բանակի կազմակերպման դասակարգաւորն սկզբունքները : ԲԳԿԲ պետկազմի կաղրերը . նրանց անձնութաց նվիրվածությունը բանավոր դասակարգի ու նրա կուսակցության շահերին , նվիրվածությունը սոցիալիզմի շինարարության դործին : «Դասակարգային համախմբվածությունն ու սոցիալիստական լուսավորությունը» (կուսակցության ծրագրից) վորպես կարմիր բանակում ուսուցման ու դաստիարակության հիմք :

Կորմիր բանակի ինտերնացիոնալ բնույթը : Բոլոր աղքությունների հավասարությունը , վորպես Կարմիր բանակի շինարարության կարևորագույն հիմքը : Կարմիր բանակը բարեկելիյան քաղաքական առաջնակարգ դպրոց ե : Կարմիր բանակի խաղաղության հենարանն ե :

Կուսակցության ղեկավար ու կազմակերպչական ղերը պրոլետարական պետության գինված ուժերի շինարարության մեջ : Կուսակցությունը , վորպես կարմիր բանակի հաղթանակների առաջնորդն ու կազմակերպիչը քաղաքացիական պատերազմի ճակատներում : Կուսակցության կենտրոնի ղեկավար ղերը Կարմիր բանակում : Լենինի ու Ստալինի ղեկավար կարմիր բանակի շինորարության մեջ ու քաղաքացիական պատերազմում նրա հաղթանակների կազմակերպման մեջ : Ընկ . Ֆրունզեյի և ընկ . Վորոշիլովի ղերը քաղաքացիական պատերազմում ու կարմիր բանակի շինարարության մեջ :

Կուսակցության կենտրոնի և ընկ : Ստալինի ղերը ԽՍՀՄ պաշտպանունակության և կարմիր բանակի մարտական կորովի ամրացման մեջ ժամանակակից ետապում : Ծնկ . Վորոշիլովը , վորպես կարմիր բանակի բայլը և կազմակերպման մասնակից առաջնորդ :

2 . Կարմիր բանակի քաղաքական դեկալարության հիմնամբ ները

Կարմիր բանակի մարտական կորովի ամրացումը է ուսակցության հիմնական խնդիրն ե : Կուսակցության վարպետական գործությունը բԳԿԲ-ում , վորպես կուսակցության ֆունկցիա : Բանակի ամբողջ կազմի համախմբումը բայլը և կազմակերպման կուսակցության ու կուսակցության առաջնորդը ընկ . Ստալինի ղեկավարությունը լենինյան կենտրոնի չուրջը : ԲԳԿԲ մարտիկների ու պետկազմի դաստիարակությունը դասակարգային աշալրջության ու կուսակցության զլիսավոր գծի համար մղած պայքարում անհաջողության վոգով , սոցիալիզմի յերկրի պաշտպանության դուրս գալու մշտական պատրաստակամության վոկով . Հրամկադրությունը , քաղաքաբարատը , կուսկազմակերպությունն ու կոմսոմուլը ԲԳԿԲ-ում :

Լենինն ու Ստալինը Կարմիր բանակի կարգապահության նշանակության մասին : «Ով ամբողջովին և անձնվերաբար չի ոգնում Կարմիր բանակին , չի պահպանում բոլոր ուժերով նրա կարգն ու կանոնն ու կարգապահությունը—նա գավաճան ե» (Լենին) : Նորագույն ռազմական տեխնիկայի աիրապետումը , վորպես ժամանակակից ետապում ԲԳԿԲ մարտական պատրաստության կենտրոնական խնդիր : «Առաջմական տեխնիկայի տիրապետման միջոցով ղեկավարության հաղթանակներ» (Վորոշիլով) : Պայքարը տեխնիկայի տիրապետման համար , մարտական ու քաղաքական պատրաստության բարձր մակարդակի ապահովման համար , վորպես ԲԳԿԲ կուսքաղաջասատանքի կարևորագույն խնդիրներ :

Զինվորական կարգապահության ամրացումը վհնական նախապայման ե տեխնիկայի տիրապետման ու նրա իննամման համար , ԲԳԿԲ մարտական կորովի հետագա բարձրացման համար : Պայքարը յերկաթե զինվորական կարգապահության համար՝ կազմակերպվածության ու պետկազմի կողմից ուս-

Հանջկոտության բարձրացման, նրա որինակելիության, յուրաքանչյուր կոմունիստի ու կոմյերիտականի որինակելիության հիման վրա, բանակային կուսկաղմակերպության կենտրոնական խնդիրն ե:

### 3. Կուսշինարարությունը ԲԳԿԲ-ում

Բայլշեփմի կաղմակերպչական սկզբունքները ԲԳԿԲ կուսկաղմակերպության շինարարության հիմքն են: Դեմոկրատական կենտրոնացման սկզբունքի կիրառումը բանակային կուսկաղմակերպություններում: Բանակային ղեկավարության միասնության, խիստ կենտրոնացման ու զինվորական յերկաթե կարգապահության պահանջները և կուսկաղմակերպության կաղմակերպչական կառուցվածքի առանձնահատկությունները կարմիր բանակում: Կուսակցական ու պետական Փունկցիաների համախմբումը քաղմարմիններում: Ներկուսակցական դեմոկրատիայի կիրառման ձեւերը բանակում: Քաղմարմինների, միահրամանատարների ու կոմիսարների նշանակման սիստեմը: Կուսակցական հանձնաժողովների և ստորին կուսորդանների ընտրականությունը: Միահրամատարության դերը կուսղեկավարության սիստեմում: Կոմսոմոլի կառուցվածքի ու աշխատանքի առանձնահատկությունները կարմիր բանակում: Ինքնաքննադատությունը ԲԳԿԲ-ում և կուսկաղմակերպության նախաձեռնության ու ակտիվության ամեն կերպ ծավալման անհրաժեշտությունն՝ ամբացնելու համար կարմիր բանակի մարտունկությունը:

Միահրամատարությունը ԲԳԿԲ-ում, վորդես կուսակցական աղղեցության ու կուսակցական-քաղաքական ղեկավարության ամբացման պայման բանակում: Կուսակցության պայքարն ընդունված հակահեղափոխական տրոցիստական դրաբարության՝ կարմիր բանակի ու նրա ղեկավարության դեմ: Բանակի ու նրա ղեկավար կաղըերի գեմ տրոցկիստա-

կան զբարտության կրկնությունն աչ ոսկրտումիստների կողմից: Կուսակցության պայքարն ոպղողիցիոն հոսանքների փորձերի դեմ, վորոնք ձգտում եյին «բանակի շարքերում արձագանդ դանել իրենց քաղաքական տրամադրություններին» (Վորոշիլով): Ֆրակցիոնականության ու խմբակայնության հատուկ վտանգավորությունը բանակային կուսկաղմակերպության շարքերում և միասնության ու միաձուլության հետազա ամբացման խնդիրը բանակային բայլշեկիկների շարքերում՝ մեր կուսակցության լենինյան գլխավոր գծի հիման վրա:

Բանակային կուսկաղմակերպության վերակառուցումը՝ համաձայն նոր խնդիրների: Բջիջների քարտուղարների Յ-բդ համարանակային խորհրդակցության վորոշումներն ու նրանց նշանակությունը: Մարտական պատրաստության հարցերում հրամատարությանն ողնելու խնդրի անխղելի կապը մարտիկի ու հրամատարի քաղաքական ու կուտուրական դաստիարակության բարեկավման խնդրի հետ: «Այդ յերկու խնդիրը մեր բանակում սերտորեն կապված են, ձուլվում են ի մի խնդրի, անջատել նրանց չի կարելի, մաս-մաս յուրաքանչյուրն առանձին լուծել այն չի կարելի: Հարկավոր ե այդ յերկու խնդիրը լուծել, վորպես մի խնդրի» (Գամարնիկ):

Կուսաշխատանքի ծանրության կենտրոնն ստորին ողակները տեղափոխելը: Կենդանի ղեկավարությունը, ցուցադրանքը, աշխատանքի պլանայնացման բարեկավումը, ստուգումն ու վերահսկողությունը, կոմունիստների ու կոմյերիտականների որինակելիությունը կարգապահության մեջ, մարտական ու քաղաքական պատրաստության մեջ,—այս բոլորը կուսաշխատանքի վերակառուցման հիմնական գծերն են: Առանձնապես կարեոր ե ներկուսակցական աշխատանքի դերը:

17-րդ կուսկոնքի բանսի վորոշումները, վորովես ԲԳԿԲ կուսակցական ու կոմյերի խոտական մասսաների և ամբողջ կազմի դաստիարակության հիմք:

4 - Ր Դ Թ Ե Մ Ա

ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՅԻՆ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱԾԻ  
ՎՐԱ ՅԵՎ ՀԱՇՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

(Յերկու պարագամունք)

1. Պայէարը յերկու ճակատի վրա մեր կուսակցության զարգացման որեւին ե.

«Մեր կուսակցության ամբողջ անցյալը հանդիսանում ե այն դրության հաստատումը, վոր մեր կուսակցության պատմությունը ներկուսակցական հակասությունների հաղթահարման և այդ հաղթահարման հիման վրա մեր կուսակցության անշեղ ամբացման պատմությունն ե» (Ստալին): «Բայց չեղան աճել ու ամբացել ե անխնա պայքար մղելով ընդդեմ բոլոր գույների ոպորտունիղմի դեմ, վորի թվում նաև ցնարիղմի դեմ Արևմուտքում (Կառուցկի) և ցնարիղմի դեմ մեղանում (Տրոցկի և այլն)» (Ստալին):

Բայց եկեղեց կուսակցության պայքարի նշանակությունը բանվորական շարժման ներսում յեղած թշնամիների ու կուսակցության ներսում յեղած թեքումների դեմ՝ ամբացնելու համար կուսակցության լենինյան միասնությունն ու նրա մարտունակությունը:

Ոպորտունիստական թեքումների սոցիալական արժատաները: Թեքումները մեր կուսակցության ներսում, վորպես արդյունք թշնամական դասակարգային ուժերի կողմից բանվոր դասակարգի ու նրա կուսակցության վրա գործադրած ճշշման: Թեքումների ու ֆրակցիոն խմբավորումների վտան-

դը, մանալանդ պրոլետարիատի գիկտատուրայի շրջանում: Կուսակցության պայքարը յերկու ճակատով ու հաջողողականության դեմ, վորպես հիմնական նախապայման յերկրորդ հնդամյակում ԽՍՀՄ մեջ լիակատար սոցիալիստական հասրակակարգ կառուցելու համար:

Բայց եկեղեցի պայքարը մենցեկեների ու տրոցկիզմի դեմ 1905 թվի հեղափոխության շրջանում՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերաձելու լենինյան պլանի համար:

Պայքար հեղափոխական կուսակցության համար, կուսակցության ծրագրի ու տակտիկայի համար, ընդդեմ մենշևիկ-լիկվիդատորների, ընդդեմ ցնարիստաների (Տրոցկի) և ընդդեմ «չուռ տված լիկվիդատորների» (ոտղովիստներ) ռեակցիայի վերենքի տարիներին: Պայքարը սոցիալ-չուռլինիզմի դեմ իմպերիալիստական պատերազմի տարիներին:

Կուսակցության պայքարը կամենե-Զինովի-Ռիկովի դեմ չոկտեմբերյան նախապատրաստության շրջանում և պրոլետարական հեղափոխության հաղթանակից հետո՝ իշխանությունը նվաճելու և կաղմակերպելու հարցերի վերաբերյալ: «Զախ» կոմունիստների խմբակի (Բուխարին) և տրոցկիզմի գիրքը Բրեստի շրջանում և կուսակցության պայքարը նրանց դեմ: Կուսակցության պայքարը հակակուսակցական թեքումների դեմ ներին անցնելու շրջանում (10-րդ կուսհամագումար): Կուսակցությունը տրոցկիզմի դեմ մղած պայքարում 1923—1924 թ.թ.:

Կուսակցությունը տրոցկիզմի դեմ մղած պայքարում վերանորոգման շրջանում: Բայց եկեղեցիների «վերաբենման» վերաբերյալ Տրոցկու թեղիսի հակահեղափոխական եյությունը 1917 թվին: «Մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության» ժխտումը, «վոր ծածկված եր համաշխարհային հեղափոխության հաղթանակի մասին «հեղափոխական» Փքաղով». «դյուղում սոցիալիստական շինարարության դոր-

ծին գյուղացիության հիմնական մասսաներին ներգրավելու հնարավորության ժխտումը» (Ստալին)։ Կուսակցության մեջ յերկաթե կարգապահության անհրաժեշտության ժխտումը և կուսակցության մեջ ֆրակցիոն խմբավորումների աղատության ընդունումը—այս բոլորը հակահեղափոխական տրոցկիզմի բնորոշ դժերն են։ Կուսակցության մեղադրումը տերմիդորական վերասերման մեջ, վորագես տրոցկիստների հակահեղափոխական դրապարտություն լենինյան բայլը և իկյան կուսակցության դեմ։ «Կապիտուլանտություն դործով, վորագես քովանակություն, «ձախ» ֆրազներ ու «հեղափոխական» ավանտյուրիստական մարդեղողաթյուն, վորագես ձեւ, վորոք քողարկում և ու ունկնամի յենթարկում կապիտուլյանտական բովանդակությունը,—այսպիսին է տրոցկիզմի եյությունը» (Ստալին)։

Բանվոր գասակարգին առաջնորդելու համար դեպի ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակումը, «կաղմակիրսկելու համար գյուղացիության մասսայական կոլտընտեսական շարժումը և վերացնելու համար կուտակությունը» հարկամոր եր թաղել տրոցկիզմի բուրժուական թեորիան՝ մեր յերկում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին «Հարկավոր եր թաղել տրոցկիզմի բուրժուական թեորիան այն մասին, թե անհնար և զյուղացիության աշխատավոր մասսաներին հազորգակից դարձնել սոցիալիզմին»։ «Կուսակցության յերկաթե միասնությունը և կուսակցության մեջ պրոլետարական կարգապահությունն ապահովի՛ու համար հարկամոր եր, ամենից առաջ, թաղել տրոցկիզմի կաղմակիրսական թեորիան» (Ստալին)։

Տրոցկիսմը Համկոմկուսի (թ) ներսում հակակուսակցական հոսանքից հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկտությունից մեջ միասնությունը պարզաբերել է կոմունիզմի ֆրակցիան լինելուց։ Իրոք տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկտուն է,

վորը պայքար և մղում կոմունիզմի դեմ, Խորհրդային իշխանության դեմ, ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի շինարարության դեմ» (Ստալին)։

2. Կուսակցության պայքարը յերկու ճակատի վրա Ժամանակից ետապում։

Ինդուստրացումն ու գյուղատնտեսության կոլեկտիվացումը; Վորագես սոցիալիզմի կառուցման ուղի։ Դասակարգային պայքարի սրումը վերակառուցման շրջանում։ Աջ ոպղորտունիզմը, վորագես գլխավոր վտանգ մեր կուսակցության ներսում ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանում։

Աջ թեքման կուլակային եյությունը։ Կուչակի՝ սոցիալիզմի մեջ խաղաղ ներաճման թեորիան, վորագես աջ ոպղորտունիստների գլխավոր գրույթներից մեկը։ Աջերի պայքարն ընդդեմ՝ ինդուստրացման, խորհունտեսական ու կոլտնտեսական շինարարության մեջ կուսակցության վերցրած տեմպերի։ Աջերի գլորվելը գեղիւ լիբերալ թեորիան՝ գյուղացիությանն անընդհատ զիջումների, նրանց կողմից ներկի լենինյան հասկացողության խեղաթյուրումը և քաղաքի ու գյուղի միջև զողման արտադրական նոր ձեռքերի խեղաթյուրումը։ Աջերի փորձերն սպեկուլյացիայի յենթարկելու անտեսական գժվարությունը։ «Ճնշման» մեջ կուսակցությանն աջ ոպղորտունիստների կողմից մեղադրելու հարազատությունը՝ կուսակցության ու նրա ապարատի դեմ տրոցկիստական վրապարտանքի հետ։ «Կաղմակերպված կապիտալիզմի» Բուլարինյան թեորիայի սոցիալ-դեմոկրատական եյությունը։ Աջերի իդեական ներկայումը բուրժուական ռեստավրատորների ծրագրին։ Աջերի Փրակցիոն գործունենությունը համկոմկուսի (թ) և կոմինտերնի մեջ։ «Աջ թեքման հաղթանակը մեր կուսակցության մեջ կնշանակեր բանվոր գասակարգի վակատար զինաթափում, կապիտալիստական տարրերի վե-

նում գյուղում և կապիտալիզմի ռեստավրացիայի շահսերի աճում ԽՍՀՄ մէջ» (Ստալին)։ Աջ ուղրուունիզմի ջախջախումը մինչև Համկոմկուսի (թ) 16-րդ համազումարը։ 16-րդ կուսամազումարի վորոշումն աջ ոսկողիցիայի տեսակետների անհամատելիությունը Համկոմկուսի (թ) պատկանելության հետ։

«Զախ» խոտորումները, վորպես փորձ «մեղանում վերականգնելու տրոցիկոմի տրակիցիաները գործնականում», վերականգնելու տրոցիկստական վերաբերմունքը գեղի միջին գյուղացիությունը» (Ստալին)։ Աջ-«ձախական» բլոկը (Միքով, Լոմինածե և այլն) ու նրա աջ ոսկորուունիստական ելությունը։ Յերկերեսանիությունը, վորպես աջ-«ձախական» բլոկի պայքարի մեթոդ կուսակցության գեմ։

Ընկ. Ստալինի նամակը կուսակցության պատմության հարցերում տրոցիխստական և ամեն տեսակ կոնտրարանզի գեմ պայքարի մասին և այդ նամակի նշանակությունը բարձրացնելու համար կուսակցական աշալրջությունը տեսական ֆրոնտում և կուսակցության անդամների բայցելիկյան դաստիարակության համար։

17-րդ կուսկոնֆերանսի վորոշումների համաշխարհային-պատմական նշանակությունը յերկրորդ հնդամյալում ԽՍՀՄ մէջ դասակարգերի վերացման և սոցիալստական հասարակություն կառուցելու մասին։ «Դասակարգային պայքարի սրման անփուսափելիությունն առանձին մոմենտներում և մանավանդ առանձին ռայոններում և սոցիալիստական շինարության առանձին բնագավառներում», «բուրժուական աղղեցությունների պահպանման, իսկ վորոշ գեղքերում նաև ուժեղացման անխուսափելիությունն աշխատավորների առանձին խալերի ու խմբակների վրա, դեռ յերկար ժամանակվա ընթացքում պլրուետարիատին խորթ դասակարգային աղղեցությունների սողուկման անխուսափելիությունը բանվորների և մինչև իսկ կուսակցության մէջ» և այդ առթիվ

«պրոլետարիատի դիկտուտուրայի ամրացման և պայքարի հետադարձական անհրաժեշտությունն ռպորտունիզմի և մանալանդ աջ թեքման դեմ, վորպես տվյալ ետապում զվարվող վոր վտանգի դեմ»։

Կապիտալիստական տարբերի մասցրդների զիմաղրության ձևերի, ինչպես նաև ոպորտունիզմի արտահայտության առանձնահատկությունները ժամանակակից ետապում, յերկերեսանիության, ալելույականության, կուսակցության ու կառավարության վորոշումների բուրժուական խեղաթյուրումների փորձեր։ Կուսակցության պայքարն ընդդեմ՝ ընկ. Ստալինի վեց պայմանների ոպորտունիստական թերազնահատման, ընդդեմ տնտեսաշաշվարկի ու խորհրդային առեւտրի բուրժուական խեղաթյուրումների, ընդդեմ կոլտնաեսություններում կուսակային տնտեսացների, ընդդեմ կուսակցության կողմից սոցիալստական շինարարության վերցրած սության կողմից սոցիալստական շինարարության հիմնական ձևերին դիմադրելու և աշխատանքը նոր ձևով վերակառուցել չցանկանալու։

Սրբեն իսկ այժմ «մթերափիստակմանն» անցնելու անհրաժեշտության մասին «ձախ» Փրառի, դրամի մահացման և այլի հակարառությունների բնույթը։ Վճռական պայքարի անհրաժեշտությունն ընդդեմ՝ արտկիլի, վորպես տվյալ ետապում կուսական շինարարության հիմնական ձևերի, տապում կուսական շինարարության հաղմականության մասին ամրացման դեմ ցույց տված կաղմակերպչական-տնտեսական անհամարժեալ կուսական առեւտր-«ձախական» դիմադրության, ընդդեմ կուսական առեւտրի ծավալմանը ցույց տված դիմադրության։

Աջ թեքումը գլխավոր վտանգ է տվյալ ետապում ու յերկրորդ հնդամյակում։

Կուսակցության պայքարը յերկու ճակատով աղղային հարցի նկատմամբ կատարած թեքումների դեմ։ Դեսպի վելիուստական շովինիզմը և գեղի տեղական նացիոնալիզմը ցույց տված թեքումների ելությունը։ Դեսպի վելիկուստական շովինիզմը կատարած թեքումը, վորպես աղղային հարցում

կուսակցության մեջ գրիսավոր վտանդ։ Աղքային հարցում յերկու թեքումների դեմ ու հաշտվողականության դեմ պայքարի անհրաժեշտությունը վորպես աղքային լենինյան քաղաքականության կենսագործման վճռական պայման։

Տ · Ր Դ թ Ե Ս Ա

ՀԱՄԿ(Բ)Կ—ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ  
ՅԵՎ. ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.

(ՅԵՐԿՈՒ պարագամունք)

Բայլշենիյան կուսակցության պայքարի միջազգային նշանակությունը՝ բանվոր դասակարգի բայլշենիկյան ծրագրի, տակտիկայի և կաղմակերպման համար։

Բայլշենիկներն՝ աշխարհում միակ հեղափոխական կուսակցությունն են—նոր տիպի կուսակցությունն են, վորք հենց իր գոյության սկզբից ՌՍԴԲԿ-ում և ամբողջ ՌԽ ինտերնացիոնալում տանում եր ամեն տեսակ ոպորտունիզմի և ցենտրիզմի մերկացման և նրանից անջատման դիմ։

«Թուսական հեղափոխությունը յեղել ե (մնում ե) վորպես համաշխարհային հեղափոխության հանդուցային կետ»։ «Թուսական հեղափոխության արմատական հարցերը զբան միասին հանդիսացել են (հանդիսանում են և այժմ) համաշխարհային հեղափոխության արմատական հարցերը» (Ստալին)։

Բայլշենիկները վորպես աշխարհում միակ հեղափոխական կուսակցություն, վորք նախապատրաստված ե ամբողջ պատմության կողմից նրա համար, վորպեսզի դառնա համաշխարհային կոմունիստական կուսակցության, նոր տիպի կուսակցության—կոմինտերնի կաղմակերպիչն ու առաջնորդը։ Բայլշենիզմի պայքարը մենշենիզմի և ցենտրիզմի դեմ (Տրոցկի և մյուսները) թուսաստանում, ոպորտունիզմի և ցենտ-

րիզմի դեմ (Կառուցկի) Արևմուտքում, ձախ ուղիկաշնիրի անհետողականության և ցենտրիստական տատանումների դեմ (Բ. Լյուքսեմբուրգ)։

1914—18 թ. թ. պատերազմը։ Յերկրորդ ինտերնացիոնալի անանկությունը։ Յիմմերվալդն ու Կինտալը, վորպես պայքարի ետապներ կոմինտերնի ստեղծման համար։ Պայքար ցիմմերվալդյան ձախերի ներսում։ Հոկտեմբերյան հաղթական հեղափոխությունը, կատարված մեր կուսակցության զեկավարությամբ Լենինի և Ստալինի գիտավորությամբ, և այդ հեղափոխության միջազգային նշանակությունը։

Կոմկուսակցությունների առաջ դալը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մի շարք կապիտալիստական յերկրներում։ Կոմինտերնի կազմակերպման ձեավորումը Կոմունիստական ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսում 1919 թ.։

Կոմունիստական ինտերնացիոնալը վորպես I ինտերնացիոնալի միակ շարունակողը, վորպիսի ինտերնացիոնալը զեկավարվում եր Մարքս-Ենգելսի կողմից և Յերկրորդ ինտերնացիոնալի նախապատերազմյան լավագույն տրատիցիաների ժառանգորդը։ Լենինի պայքարը սոցիալ-դեմոկրատական զաղափարախոսության դեմ կոմինտերնում։ Կոմինտերնի շարքերի զառումը ժամանակավոր ուղեկիցներից։ Կոմինտերնի մեջ մանելու քսանմեկ պայմանների պատմական նշանակությունը։

ԽՍՀՄ վորպես համաշխարհային հեղափոխական շարժման կենտրոն։ Պրոլետարիատի դիկտատուրան և սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում—կոմունիստական ինտերնացիոնալի ամուր բաղան են։ Պրոլետարիական հեղափոխության լենինյան թեորիան և տակտիկան կոմինտերնի զեկավար սկզբունքն են։ Լենինը վորպես կոմունիստական ինտերնացիոնալի առաջնորդ։

Կապիտալիզմի ընդհանուր ճշնաժամի զարգացման յերեք

Ժամանակաշրջան և կոմունիստական ինտերնացիոնալի պայքարը յերկու ճակատի վրա:

Աջ և «ձախ» ոպորտունիստների և տրոցկիստների ջախջախումը Համ Կ(ր)Կ-ում և ջախջախման նշանակությունը կոմունիստական ինտերնացիոնալի համար: «Կաղմակերպված» կապիտալիզմի թեորիայի մերկացումն ու սնանկությունը և այդ սոցիալ-Փաշխտական թեորիայի և նրա բոլոր այլատեսությունների դեմ պայքարի նշանակությունը կոմինտերնի շարքերն ամբողջներու համար:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետագա խորացումն ու սրումը: Վերջ կապիտալիստական կայունացմանը (ստարիլիզացիային): “Գործազրկության վիթխարի աճը և լայն աշխատավորական մասսաների սպառման խիստ նվազումը բացարձակ աղքատացման առնչությամբ: Կապիտալի հետագա հարձակումը բանվոր դասակարգի և գյուղի աշխատավորների կենսական մակարդակի վրա, քաղաքական հետապիմության (ռեակցիայի) ուժեղացումը (Փաշլոմ) և նոր պատերազմների պատրաստությունը վորպես ճգնաժամից կապիտալիստական յերքի միջոց:

Սոցիալիզմի շինարարության վիթխարի հաջողությունները ԽՍՀՄ-ում և ԽՍՀՄ աշխատավորների բարեկեցության անընդհատ աճումը: Կապիտալիստական աշխարհի և Խորհրդային Միության միջև հակասությունը—հիմնական համաշխարհային հակասություն է: ԽՍՀՄ դեմ աճող տեմպերով ինտերվենցիայի պատրաստությունը: Սոցիալ-Փաշիզմի և հակահեղափոխական տրոցկիզմի դերը ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստության մեջ:

Հեղափոխական հղոր վերելքի աճումը կապիտալիստական յերկրներում և դադութներում, վորպես տնտեսական ճգնաժամի սրման և ԽՍՀՄ սոցիալիզմի աճման հետեանք: Քաղաքի և դյուղի լայն աշխատավոր մասսաների ներդրավումը հեղափոխական շարժման մեջ:

Հեղափոխական ճղնաժամի նախադրյալների հասունացումը մի շարք կապիտալիստական յերկրներում (Լեհաստան, Գերմանիա): Կոմունիստական ինտերնացիոնալի աճումը: Կոմկուսակցությունների կաղմակերպումն աշխարհի համարյա բոլոր յերկրներում և նրանց քաղաքական ու կաղմակերպչական աղղեցության ուժեղացումը (Գերմանիա, Լեհաստան, Զինաստան, Չեխո-Մոլդավիա):


Սոցիալ-Փաշիզմի աղղեցության թուլացումը բանլորների մեջ, բանվորական մասսաների սոցիալ-Փաշխտներից յերես գարձնելու պրոցեսի ուժեղացումը: Հետագա վճռական պայքարի անհրաժեշտությունը սոցիալ-Փաշխտներին և մասնականդ նրանց «ձախ» մանյովրները մերկացնելու համար:

Բանվոր դասակարգի մեծամասնության նվաճումը կոմկուսակցությունների կողմը վարից միանական ճակատի տակտիկան գործազրելու հիման վրա—ներկա մոմենտում կոմունիստական ինտերնացիոնալի բոլոր սեղցիաների կենտրոնական խնդիրն է: Յերկու ճակատի վրա հետագա վճռական պայքարի խնդիրը կոմինտերնում, աջ թեքման դեմ, վորպես գլխավոր վտանգի, ձախ ոպորտունիզմի և նրա նկատմամբ հաշտվողականության դեմ, վորպես վճռական պայման դեսի հեղափոխության կողմը բանվոր դասակարգի մեծամասնությունը դրավելու համար:

Եղբայրական կոմկուսակցությունների պայքարի պայմանները և Համ Կ(ր)Կ փոքրի նշանակությունը նրանց համար: Պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի գիտատուրայի լենինյան թեորիայի, կուսակցության մասին լենինյան ուսմունքի և ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության պրակտիկայի նշանակությունը կոմունիստական ինտերնացիոնական բոլոր սեղցիաների համար: Հոկտեմբերյան ապստամբության դասերի նշանակությունը միջնազդային պրոլետարիատի և կոմինտերնի համար: Կարմիր բանակի զինված պայքարի փոքրը և նրա նշանակությունը յեղայ-

բական կոմկուսակցությունների համար։ Աղջային հարցի մասին լենինյան ուսմունքը կոմունիստական կուսակցությունների պայքարի դենքն և պրոլետարական հեղափոխության և ձնչված աղքությունների հեղափոխական շարժման միջն կապի համար։ ԽՍՀՄ ապագա միջազգային փոխարարերությունների նախատիպն և պրոլետարական հեղափոխության հաղթանակից հետո։ ԽՍՀՄ սոցիալիստական ուղու վրա վերջնականապես հաստատվելու միջազգային մեծագույն նշանակությունը և XVII կուսկոնքներանսի պատմական վորոշումների նշանակությունը։ Աջ և «ձախ» ուղղորդունիղմի գեմ Համ Կ(բ)Կ պայքարի նշանակությունը կոմունիստական ինտերնացիոնալի համար։

Համ Կ(բ)Կ ղեկավար գերը կոմինտերնում։ Ստալինը լենինի մերձավոր դինակիցն և բայց նիկոյան կուսակցության և կոմինտերնի ստեղծման գործում, Համ Կ(բ)Կ-ի և Կոմինտերնի ու ամբողջ միջազգային պրոլետարիատի առաջնորդն ու տեսաբանն եւ։



Գետիքատի տպարան, Յերևան

«Ազգային գրադարան



NL0217746

41 322

ԳԻՆԸ 25 ԿԱՊ.